



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1191

151.7
S-46

G. 1932

2010

002001

151.7
S-46

Հ. Ս. Խ. Հ.

Հ Ե Ռ Ա Կ Ա Ի ն գ ո Ւ Ս Տ Ր Ի Ա Լ - Ա Գ Ր Ա Ր Ա Յ Ի Ն
Մ Ա Ն Կ Ա Վ Ա Ր Ժ Ա Կ Ա Ն Ի Ն Ս Տ Ի Տ Ո Ւ Տ

Բ Ճ . Դ Ր . Տ Ե Ր - Մ Կ Ր Տ Չ Թ Ա Ն Ն

77

Պ Ե Դ Ո Լ Ո Գ Ի Ա
(Մ Ա Ն Կ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն)

Ա Ռ Ա Ջ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն № 3

Ա Ն Հ Ա Տ Ի Զ Ա Ր Գ Ա Յ Ո Ւ Մ Ը Պ Ա Յ Մ Ա Ն Ա Վ Ո Ր Ո Ղ Ն Ե Ր Գ Ի Ն Յ Ե Վ
Ա Ր Տ Ա Գ Ի Ն Ֆ Ա Կ Տ Ո Ր Ն Ե Ր Ը

Մ Ա Ն Յ Ե Ր Կ Ր Ո Ր Դ
Ա Ր Տ Ա Գ Ի Ն (Ե Բ Ս Ո Ր Գ Ե Ն) Ֆ Ա Կ Տ Ո Ր Ն Ե Ր

Հ ա ս ց ե ն

.....	չ ր ջ ա ն	Մ ա ղ կ ա
.....	4 1 " ւ ղ	
.....	է ն	

При ненахождении адреса вернуть: Эривань,
Абовян 124, Заочному Индустриально-Аграр-
ному Институту

35647-11.7

151.7

9-46

Պետերատի տղարան
Գլավլիտ 6998 (բ)
Գատվեր 6326
Տիրած 1200



18827-59

19.06

Պ Ե Դ Ո Լ Ո Գ Ի Ս

(Մանկագրանություն)

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ № 3

Անհատի զարգացումը պայմանավորող ներքին յեվ
ա.բ.աբ. գ. ճակատները

ՄԱՍՆ ՅԵՐԿՐՈՒԻ

Արտաքին (եքստերն) ֆակտորները

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ

- I. Ներածական մաս:
- II. Ֆիզիկական միջավայր և անհատի զարգացումը:
- III. Սոցիալական միջավայրի գերակշիռ դերը անհատի զարգացման վրա:
 - 1. Յերեխաների մահացությունը և սոցիալական միջավայրը:
 - 2. Մանկան ֆիզիկական զարգացումը և միջավայրը:
 - 4. Սոցիալ-տնտեսական շրջապատը և վարքը:
- IV. Ինֆրաստուգման հարցեր և գրականություն:

1007
33437

I. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Նախորդ առաջադրության մեջ տեսանք, թե ինչ մեծ նշանակություն ունեն ենդոգեն ֆակտորները (ժառանգականությունը, ներքին սեկրեցիայի գեղձերը և կոնստիտուցիան) անհատի կազմակերպման տևական պրոցեսում: Նոքա բիոլոգիական այն բարդ մեխանիզմներն են, վորոնք տալիս են անհատի վարքի և նրա կառուցվածքի միայն ընդհանուր ուղղագիծը: Մնվելիս յերեխան իր հետ ժառանգաբար բերում է միայն բիոլոգիական վորոշ հակումներ, տենդենցներ ու պոտենցիալ հնարավորություններ. նրա ապրելիք միջավայրիցն է կախված այդ պոտենցիաների և նախատրամադրությունների արտահայտվելու կամ չարտահայտվելու, խեղդվելու կամ զարգանալու ամբողջ բախտը: Ժառանգած բնածին հատկությունները կարող են բոլորովին յերևան չգալ, յեթե

47/4

(47/4)

չըջապատող միջավայրի մեջ չկան համապատասխան խթաններ, վորոնք կարողանային շարժողութեան մեջ դնել նրանց: Միջավայրըն է, վոր ձևակերպում է մարդու ինքնութեանը՝ բնածին ժառանգական տվյալների հիման վրա: Խոսել անհատի մասին, առանց նրա շրջապատող միջավայրն ի նկատի ունենալու, նշանակում է խոսել մի արատրակտ և վերացական յերևույթի մասին, վորը գոյութեան չունի իրականութեան մեջ:

Յերեխայի անհատականութեան ձևակերպումը, նրա վարք ու բարքը, սովորութեանները, հետաքրքրութեանները, ճաշակը, նրա ամբողջ աշխարհայացքը կազմակերպվում են սոցիալ-տնտեսական պայմանների գորեղ ազդեցութեան տակ: «Միջավայրը այն արձանագործն է, — ասում է Պոլրովսկին, — վորը մարդկային միջնույն նյութից քանդակում է տարբեր անհատներ. նա գործում է ճիշտ այնպես, ինչպես փողի մեքենան, վորը միջնույն մետաղից դրվադում է տարբեր արժեքի դրամներ»:

Ահա թե ինչո՞ւ, յերեխային հասկանալու նրա դաստիարակութեան գործը հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար, անհրաժեշտ է ուսումնասիրել և ծանոթանալ նրան շրջապատող միջավայրի հետ:

Միջավայրի մասին խոսելիս առհասարակ տարբերում են Ֆիզիկական և սոցիալական միջավայրը: Իհարկե, այդ ձևական տարբերութեանը և բաժանումը հիմք չպիտի ծառայի բացասելու նրանց մեջ յեղած սերտ կապը: Մարդուն շրջապատող միջավայրը արհեստականորեն բաժանված չէ բնականի և արհեստականի, այլ՝ կապված է միմիանց հետ: Մի կողմից՝ չբնական արտադրական ուժերըն են պայմանավորում մարդու աշխատանքային գործունեությունը, մյուս կողմից՝ սոցիալական գործունեությունն են փոփոխում բնական պայմանները, վորովհետև մարդը, ինչպես Ենգելսն է ասում, վոչ թե պասսիվ կերպով է հարմարվում շրջապատող բնութեանը, ինչպես կենդանիները, այլ ակտիվ պայքարի միջոցով և բնութեան ուժերը հարմարեցնում իր կարիքներին: Ուրեմն մարդու՝ տվյալ դեպքում յերեխայի ստացած ազդեցութեանները հաշվի առնելիս հարկավոր է ինկատի ունենալ դրանց յերկու մեծ ազդուրդները՝ — բնութեանը և սոցիալական շրջապատը: Կանգ առնենք նախ առաջինի՝ բնութեան կամ Ֆիզիկական միջավայրի վրա:

Անջատ և մաքուր յերեվույթներ գոյութեան չունեն փոչ բնութեան, վոչ էլ հասարակութեան մեջ, ասում է Լենինը, այլպես դա կհակասեր մատերիալիստական դիալեկտիկայի որենքներին: Ամեն մի յերեվույթ անընդհատ փոփոխման և դարդացման մեջ գտնվող մատերիայի մի վորոշ ետապ է ներկայացնում. ծանաչել մի վորեկ յերեվույթ նշանակում է պարզել նրա տեղը բազմաթիվ յերևույթների շարանի մեջ, ընդգրկել նրան բազմակողմանիորեն՝ շրջապատի բազմազան պայմաններում:

Կենդանի որդանիղմն էլ մեկուսացած յերևույթ չի բնութեան մեջ. նա սլատրաստի ձևով չի իջել յերկնքից, այլ արդյունք է նրա և միջավայրի մեջ տեղի ունեցող դարավոր պայքարի և հարմարման: Բուսական և կենդանական որդանիղմների վրա կատարված բազմաթիվ փորձերով ապացուցված է, վոր նրանց վրա մեծ ազդեցութեան ունեն՝ կլիման, աշխարհագրական դիրքը, մակերեսի կազմութեանը, ուղը, լույսը, ջուրը և վոր մարդն էլ բացառութեան չի կազմում դրանցից:

Ֆիզիկական միջավայրի գործոնների ազդեցութեան տակ մարդու կառուցվածքի և վարքի փոփոխութեանը կարելի չէ հաստատել ամեն մի քայլափոխում: Այսպես ատորյա դիտողութեաններից և շատ անգամ անսխալ կարելի չէ տարբերել լեռնեցուն դաշտավայրում ապրողից, մուսյլ հյուսիսի բնակչին վառվոռն հարավեցուց:

Յեթե համեմատութեան համար վերցնենք լեռնեցուն, ծովափին և դաշտավայրում մեծացած մարդկանց, նրանց վարքի և կառուցվածքի մեջ կտեսնենք խոշոր տարբերութեաններ: Լեռնային կյանքը պահանջում է մարդուց Ֆիզիկական ուժերի անընդհատ լարում, հետևապես մկանային ապարատի ուժեղ դարդացում, վորն իսկապես և նկատում ենք այդտեղ ապրող ազդարնակութեան մեջ: Մեծ ջրերի ու ծովերի մոտ ապրող մարդը իր խիզախ բնավորութեամբ պարտական է այն համառ պայքարին, վոր անդադար տեղի չէ ունենում նրա և ջրային տարերքի մեջ: Կյանքն ավելի դյուրին է և բարենպաստ բնահարձակ և լայնածավալ դաշտերում, վորը և նպաստում է մեղմ, ընկերասեր, խոսել սիրող բնավորութեանների առաջ գալուն: Կլիմայական պայմանները նույնպես մեծ չափով են ազդում մարդու վրա: Տաք կլիմայում ավելի վաղաժամ է կատարվում Ֆիզիկական և սեռական հասունացումը ու կարճատև լինում մանկութեան տևողութեանը: Ճոխ բնութեանը, չպահանջելով մարդուց ուժերի լարում, դարձնում է նրան ծուլ և

Թուլակազմ ու դատապարտում հետամնացութեան: Բոլորովին հակառակ կերպ է հարվածում մարդուն սառը գոտիների դաժան կյանքը, վորը կլանելով նրա ամբողջ ենթագիտանքը և ժամանակը դուռ կենդանական գոյութեան շուրջը, հնարավորութեան չի տալիս նրան դարգանալու թե՛ Ֆիլիկապես, թե՛ մտավորապես: Ամենանպաստավորը անկասկած, բարեխառն գոտին է, ուր մարդը գրտնում է իր Ֆիլիկական և հոգեկան ուժերի լրիվ զարգացման համար բոլոր անհրաժեշտ պայմանները:

Այսպես, նայած թե վորտեղ է մարդը բնակութեան հաստատել իր համար՝ հյուսիսում թե հարավում, բարձրավանդակները վրա թե հարթավայրում, անտառով պատած թե անտառազուրկ դաշտում, գետերի ու ծովերի ափին թե ջրասակավ տեղերում, այո բոլորը սոցիալ-տնտեսական գործոնների հետ միասին մնայուն հեռաբեր են թողնում և բնորոշում մարդու Ֆիլիկական ու հոգեկան կառուցվածքը:

Վերջին ժամանակները գերմանական գիտնական Հելպպիլը բացատրիկ ուշադրութեան է հատկացնում Ֆիլիկական միջավայրի և մարդու պսիխիկայի փոխհարաբերութեան խնդրին: Նրա կարծիքով անհատի հոգեկան զարգացումը դերազանցապես պայմանավորված է բնութեան կամ, ինչպես նա է ասում, գեոպսիխոլոգիկ գործոններով. այս վերջիններն են, վոր իրենց խորը կնիքն են դնում մարդու կոնսախտուցիայի և պսիխիկայի վրա և այնքան անվեր խորը, վորքան ավելի վաղ տարիքում ենք վերցնում նրան: Սա— անհատի հոգեկան եվոլուցիայի բարդ պրոցեսում, սոցիալական մոմենտի մի տիպիկ թերադնահատում է, վորին հաճախ և դիմում իր անկումը ասպրոզ բուրժուական զիտական միտքը:

Բայց, բացի վերը թված տեական բնութի կրող Ֆիլիկական ազդեցութեաններից, մարդ անհատը, — ավելի մանկական տարիքում—, յենթակա յե բնութեան և ավելի կարճատև ազդեցութեաններին ինչպես— որվա վորոշ ժամերը, տարվա յեղանակները, ողբ, ջուրը, լույսը սնունդը, բնակարանը և առողջապահական պայմանները և այլն: Որինակ, յերեխաների աշխատունակութեան ուսումնասիրութեանը և անալիզը պարզել է, վոր որվա ընթացքում նորա ունենում են աշխատանքի յերկու լավագույն-ուպտիմալ շրջաններ— առավոտյան և յերեկոյան վորոշ ժամերի ընթացքում, վորից հետո տեղի յե ունենում աշխատունակութեան անկում: Ինչ վերաբերում է տարվա յեղանակներին, համաձայն Լեմանի և Պրիկի հետազոտութեանների, յերեխաների Ֆիլիկական և մտավոր աշխատ-

տունակութեանը ուսումնական տարվա ընթացքում հետևյալ որինաչափ տատանումներն և տալիս. սեպտեմբերից-դեկտեմբերի կեսը տեղի յե ունենում բոլոր ուժերի մաքսիմալ աճում և զարգացում: Հունվարից-մարտ՝ անկում և դանդաղում: Ապրիլից-հունիս՝ նոր կարճատև վերելք, վորից հետո ամառվա ընթացքում, ուժեղ անկում:

Համաձայն կելլերի հետազոտութեանների, յերեխաների աճման զարգացման և նրանց աշխատանքի վրա վորոշ ազդեցութեան են թողնում նաև ուղի ճնշումը, նրա բարեխառնութեանը և խոնավութեան աստիճանը: Այսպես բարեխառնութեան փոփոխումների հետ է կապված հիշողութեան փոփոխումը, մինչև +22 աստիճան հիշողութեանը ուժեղանում է, իսկ ավելի բարձր ջերմաստիճանները ճնշում և թուլացնում են նրան: Բարոմետրի ուժեղ տատանումները բացասաբար են ազդում մտավոր ամբողջ գործունեության վրա: Նույնը պիտի ասել և մթնոլորտի խոնավութեան մասին յերեխայի և առհասարակ մարդու աշխատանքի համար. միայն 42-54 % խոնավութեանն է համարվում նպաստավոր:

Յերեխայի նորմալ զարգացման տեսակետից վերին աստիճանի կարևոր խնդիր է ներկայացնում բնակարանային հարցը, վորը ցափոտ սոցիալական խնդիր լինելով, միաժամանակ և՛ մաքուր ողի, և՛ առատ լույսի խնդիր է: Նայած թե բնակարանը խոնավ է թե չոր, մութ ու մռայլ է թե լուսավոր, նեղ է թե ընդարձակ, ըստ այնմ ել կարելի յե վորոշել նրա դրական կամ բացասական ազդեցութեանը ապրողների վրա: Ողբ կյանքի գլխավոր սնունդն է, առանց բավարար քանակութեան մաքուր և թարմ ողի, մանավանդ աճման հասակում, կյանքի պրոցեսները դանդաղում և թուլանում են: Անլիճելի է նաև արեղակի լույսի հսկայական նշանակութեանը առողջ և հիվանդ որդանիղմի համար: «Այնտեղ, ուր չի մտնում արեղակի ճառագայթը, այնտեղ անպայման մտնում է բժիշկը, վորից հետո և դերեզմանափորը»: այս մեծազույն ճշմարտութեանը վաղուց է, վոր արձանագրել է Ֆրանսիական ժողովրդական հանճարը: Ողի և լույսի հետ միաժամանակ առողջապահական կարևորագույն գործոններից մեկն է հանդիսանում նաև ջուրը որդանիղմի թե՛ ներքին կենսական պրոցեսների, և թե՛ նրա մարմնի մաքրութեան ու նյարդային համակարգի թարմացման և ամրապլնդման տեսակետից:

Իսխտորոշ կերպով է ազդում մանկան Ֆիլիկական և հոգեկան զարգացման վրա նաև սնունդը, վորի անբավարար լինելը քանակի

և վորակի կողմից, ինչպես կտեսնենք, հաճախ մատուղ որդանիդ-
մի թույլ զարգացման և ուժեղ մահացութեան պատճառ է դառ-
նում:

Այս բոլորից բնականաբար բխում է հետևյալ մանկաբանա-
կան-մանկավարժական յեղրակացութունը՝ — բազմակողմանի ու-
սումնասիրել և ծանոթանալ յերեխայի ապրած բնական միջավայր-
բին, հեռացնել նրանից աննպաստ և վնասակար գործոնները և,
ստեղծելով յերեխայի համար միանշամայն նպաստավոր միջա-
վայր, ապահովել նրա նորմալ զարգացումը:

III. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅԻՐ

Անհատի զարգացման և նրա վարքի կաղմակերպման համար
միազամայն վճռական դեր ունի սոցիալական գործոնը, այսինքն
սոցիալ-տնտեսական ու դասակարգային հարաբերութունների այն
բարդ և խճճված մթնոլորտը, վորի մեջ ապրում-աշխատում է ա-
մեն մի անհատ: Մինչդեռ ամբողջ կենդանական աշխարհում կյան-
քը պայմանավորված է բացառապես ժառանգականութեան և ան-
միջապես շրջապատող բնութեան պայմաններով, մարդ անհատի
զարգացումը դառնում է առաջին հերթին սոցիալական Փակտորնե-
րի գերազանց ազդեցութեան տակ: Ճիշտ է, բիոլոգիական և բնու-
թյան Ֆիզիկական Փակտորները մեծ դեր են խաղում անհատի
կյանքում, իրենց կնիքն են դնում նրա ճակատին, բայց վերջին
հաշվով նրանք չեն այն գործոնները, վորոնք պայմանավորում են
անհատի վարքի և սոցիալիկայի ամբողջ պատկերը, բովանդակու-
թյամբ լցնում նրա գործունեությունը. դա վերջնականապես վե-
րապահված է սոցիալ-տնտեսական Փակտորին, վորը, դասակար-
գային կատարյի պայքարում բնութեան ծոցից դուրս յեկած մարդ-
կային հում բիոտիպից, կուում և կոփում է ավյալ դասակարգին
համապատասխանող սոցիոտիպը:

Վոչ մեկը այնպես ցայտուն կերպով չի արտահայտել սո-
ցիալ-դասակարգային Փակտորների դերը անհատի կաղմակերպ-
ման գործում, ինչպես Ննդելսը իր հուշակավոր «Բանվոր դասա-
կարգի գրությունը Անգլիայում» աշխատութեան մեջ: «Անգլիայի
բանվոր դասակարգը, գրում է Ննդելսը, ժամանակի ընթացքում
այնպես և փոխվել, վոր բոլորովին նման չե իր յերկրի բուրժուա-
ղիային: Այս վերջինը շատ ավելի նմանութուններ ունի այլ յեր-
կրների բուրժուաների հետ, քան թե իր սեփական յերկրի ցեղակից
բանվորների հետ: Բանվոր դասակարգն ունի իր հատուկ բարբա-

ռը, իր մտածելակերպը և բարոյական հասկացողութունները բա-
լորովին տարբեր ունեվոր դասակարգից: Այս յերկու դասակար-
գերը այնքան են հեռացել միմյանցից, վոր կարծեք, նոքա բոլո-
րովին ոտար ցեղերի պատկանելիս լինեն»:

Սոցիալ-տնտեսական բարդ պայմաններում հիմնովին փոխ-
վում է ձևակերպվում է վոչ միայն մարդու սոցիալիկան, այլև
նույնիսկ նրա մեջ զրված բիոլոգիական ավելի կոնսերվատիվ մե-
խանիզմները: Աշխատանքային պրոցեսների ընթացքում, ձևեք
բերելով արհեստական գործիքներ, մարդն սկսեց տիրապետել բը-
նութեան որենքներին և այդպիսով աստիճանաբար ձեվափոխեց թե'
արտաքին աշխարհը և թե' իր սեփական բնությունը: Աշխատանքն
և կոլեկտիվորեն կաղմակերպված այն հիմնական և ղլխավոր
խթանը, վոր արտաքին աշխարհին հարմարվելու դարավոր պայ-
քարում մարդանման կապիկը բարձրացնում է մինչև մարդկային
գիտակից անհատի Homo sapiens-ի բարձր աստիճանին:

Բայց սոցիալական միջավայրը, առաջին հերթին լինելով դա-
սակարգային, կաղմակերպում է ամեն մի անհատից իր դասա-
կարգին հարողատ քաղաքացի և վոչ թե դասակարգից դուրս ա-
զադասակարգային մի գիմաղուրկ արարած, ինչպես սիրով պըն-
դում են բուրժուական պեդոլոգ-մանկավարժները, պաշտպանելով
մանկան և նրա կրթա-դաստիարակչական գործի ապագասակար-
գային և չեզոք բնույթը: Հիռո'ւ պահեք դպրոցը և մանկությու-
նը սոցիալական կյանքի ներկա սուր պայքարից, այս է այն հիմ-
նական գիծը, վորի վրա կանգնած է բուրժուական աշխարհը:
Ի՞նչ ասել կուղի, վոր իրականութեան չհամապատասխանող այդ
հակասոցիալական ուսմունքը, ինչ վոր «չեզոք ու նեյտրալ» մար-
դու և յերեխայի մասին, հենց սկզբից պիտի հանդիպեր խորհրդ-
դային մանկութան-մանկավարժների ուժեղ քննադատութեանը:
Տարիներ շարունակվող համառ դիսկուսիայի մեջ ամբողջովին
հաղթանակեց խորհրդային մանկաբանութեան այն ճիշտ սոցիոլոգի-
տեսակետը, վորի համաձայն անհատի Ֆիզիքական և հոդեկան
կաղմակերպման պրոցեսում վճռվող և բախտորոշող դերը ընկ-
նում է սոցիալական Փակտորի վրա՝ սկսած դեռ արքանդային շըր-
ջանից: Հասարակութեան տարբեր խավերից վերցրած յերեխանե-
քի բազմաթիվ ուսումնասիրութունները այլևս վոչ մի կասկած
չեն թողնում, վոր նոքա ուժեղ կերպով տարբերվում են միմյան-
ցից և' Ֆիզիկապես, և' մտավորապես, և վոր դա բղխում է գըլ-
խալորապես սոցիալ-դասակարգային հանդամանքներից:

1. ՅԵՐԵՆԱՆԵՐԻ ՄՍՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅԻՐԸ

Վաղուց արդեն հայանի եր, վոր սոցիալ-տնտեսական պայմանները իրենց դորեզ ազդեցութիւնն են թողնում զարգացող անհատի վրա՝ սկսած դեռ հղիութեան շրջանից: Մոր կյանքի պայմանները—նրա սնունդը, աշխատանքը, հոգեկան վիճակը և այլն, մեծ դեր են խաղում արգանդում զարգացող մարդ եյակի վրա: Ֆրանսիական գիտնական Լեաուրնոն իր «Մոր պրոֆեսիան և մանկան քաջը» վերնագիր կրող աշխատութեան մեջ, մայրերին, ըստ նրանց կատարած աշխատանքի ծանրութեան, բաժանում և չորս խմբի և տալիս նրանցից ծնված յերեխաների քաջը:

1. Մայրեր, վորոնք ծանր աշխատանք են կատարում հղիութեան սկզբից մինչև վերջը:
2. Մայրեր, վորոնք թեթև աշխատանք են կատարում հղիութեան սկզբից մինչև վերջը:
3. Մայրեր, վորոնք ծննդաբերութիւնից առաջ արձակուրդ են ունեցել:
4. Մայրեր, վորոնք ֆիզիկական աշխատանք չեն կատարել յերբեք:

Այս չորս խմբերից ծնված նորածինների միջին քաջը յեղել է՝

1. Պուճք	3.081	գրամ:
2. »	3.130	»
3. »	3.319	»
4. »	3.218	»

Աղյուսակը պարզ ցույց է տալիս, թե մոր կյանքի պայմանները ինչպես են անդրադառնում հղիութեան քամանակ յերեխայի ֆիզիկական զարգացման վրա:

Յեթե ծնվելուց առաջ յերեխայի վրա սոցիալական շրջապատը ազդում եր միջնորդաբար—մոր միջոցով, ավելի թույլ կերպով, ծնվելուց հետո, նա իր ամբողջ ծանրութեամբ ուղղակի յեներգործում նորածնի թույլ և անպաշտպան օրգանիզմի վրա՝ սոսկալի հարվածներ տալով նրան:

Գիտական բազմաթիվ հետազոտութիւնների հիման վրա, կատարված Յելլոսայում, Ամերիկայում և մեզնում, ասպացուցված է այն սերտ կապը, վոր գոյութիւն ունի մանուկների մահացութեան և հիվանդութեան և նրանց սոցիալ-տնտեսական ու կուլտուրական միջավայրի մեջ, այդ վերջինների բարեկամումով ան-

միջապես ընկնում է մահացողութեան և հիվանդութիւնների տուկտը, վոր միևնույն յերկրի սահմաններում մահացողութիւնը և հիվանդութիւնները հավասար չեն բաշխվում աղքատակութեան մեջ, այլ նոքա ավելի բարձր են տնտեսապես և կուլտուրապես ուղիւի հետամնաց ժողովուրդների և դասակարգերի մեջ: Իերենք մի շարք թվական տվյալներ:

Յերեխաների մահացութեան %-ը առաջին տարվա ընթացքում տարբեր կուլտուրա ունեցող յերկրներում 1914 և 1927 թ. հավասար եր՝

	1914 թ.	1927 թ.		1914 թ.	1927 թ.
Նորվեգիայում	7,0	5,3	Բելգիայում	14,2	11,1
Իրլանդիայում	10,0	7,2	Իտալիայում	14,3	12,0
Շվեյցարիայում	10,2	8,1	Իսպանիայում	15,4	13,0
Ֆրանկիայում	10,8	8,2	Գերմանիայում	15,3	10,1
Անգլիայում	10,9	7,2	Ռուսիայում	19,9	14,1
Ֆրանսիայում	21,1	9,1	Ռուսաստանում	25,0	18,7

Յերեխաների մահացողութեան %-ն ըստ դասակարգի (Գերմանիա)

Դասակարգ	0-1 տ.	1-2 տ.	3-5 տ.	5-10 տ.
Բանվոր դաս.	30,5	11,5	13,6	6,8
Մանր բուրժ.	17,3	5,5	6,5	3,8
Բուրժուազ.	8,9	1,9	2,6	1,3

Մեկեր յերեխաների մահացողութիւնը Գերմանիայի Հալլե քաղաքում 1909 թ.

Բարձ աստիճան ծառայողների ընտանեկներ.	4,9%
Չար իկտերների և կալվածատ.	9,1
Միջին ծառայողների և վճատ.	11,4
Մանր	14,2
Վարակավոր բանվորների	18,9
Անվորակ	24,1

Իեռլինի կենտրոնական Տերզաբտեն ունեւորների թաղամասում յերեխաների մահացողութիւնը հավասար է 5,2%, իսկ բանվորական վեղդինգ թաղամասում՝ 42%:

Այս աղյուսակների թվերը պերճախոս վկայում են, մի կողմից այն սերտ կապի մասին, վոր գոյութիւն ունի յերեխաների մահացութեան և սոցիալ-տնտեսական դրութեան մեջ, վոր մահացողութեան բարձր %-ը հետեւանք է վոչ այնքան աննպատակաւանդակութեան, վորքան սոցիալական հանգամանքների, մյուս

կողմից ել, այդ թվերը ստորոց ցույց են տալիս, վոր հասակի աճումով մահացողությունը պակասում է: Վաղ մանկական տարիքում որդանիդը վերին աստիճանի անկայուն է միջավայրի աննպաստ պայմանների հանդեպ, և այդ իսկ պատճառով նա մեծ ուշադրություն է խնամք է պահանջում ընտանիքի, հասարակության և պետության կողմից: Ժամանակին ձեռք առած միջոցներով շատ անգամ հաջողվում է վրկել ի ծնն թույլ և կյանքի անընդունակ յերեխաներին, մինչդեռ ավելի ուժեղ և կենսունակ յերեխաները դո՛ւ են զնում շտանարով համապատասխան ողնութուն:

Պրտի մասնանշել այստեղ և այն կապը, վոր գոյություն ունի յերեխաների մահացողություն և կյանքի ընդհանուր տեվողություն ու սոցիալական այնպիսի մոմենտների մեջ, ինչպես բնակարանը, յերեխաների սնունդը, մոր զբաղիտությունը և այլն:

Հետազոտությունները պարզել են, վոր ինչքան քիչ է մի հոգուն ընկնող բնակելիք տարածությունը, այնքան բարձր է մահացողությունը:

Այսպես Բեռլինում՝

1-2 սենյակ սենեցող բնակարանում (5 հոգ. բաղկ.) մահացողութ.	17,70%
3 " " " " " " " " " " " "	12,80%
4 " " " " " " " " " " " "	7,30%

Լենինգրադում

1 սենյակ սենեցող բնակարանում (6 հոգու համար) մահացողությունը	22%
2 " " " " " " " " " " " "	16%
3 " " " " " " " " " " " "	14%
4 " " " " " " " " " " " "	10%
5 " " " " " " " " " " " "	4%

Կյանքի միջին տեվողությունը այնքան ավելի բարձր է, վորքան շատ է բնակելիք տարածությունը և սղի կուրաաուրան մի հոգու համար:

1 սենյակում 1-2 բնակվողների կյանքի միջին տեղությունը հավասար է 7 տ.	
3-4 " " " " " " " " " " " "	36 " "

Մայրերի գրագիտությունը նույնպես մեծ չափով է ազդում յերեխաների մահացողության վրա. համաձայն 1916 թ. Նյու-Յորկի վիճակագրության՝

Երկ վրթված մայրերի յերեխաների մահացողությունը կազմում էր	10,00%
Ֆրոսի չափ " " " " " " " " " " " "	21,60%
Չբնի կորոչ իմացող " " " " " " " " " " " "	14,50%
Անզբաղեա " " " " " " " " " " " "	21,40%

Իայց ամենածանր հարվածը, վոր հասցնում է աճող սերնդին,

պա, անկասկած աննորմալ սննդառության խնդիրն է, վորը բերեց իր հետ կապիտալիզմը: Խլելով ընտանիքից նախ աղամարդուն, կարճ ժամանակից հետո կապիտալիզմը գործարան շարտեց նաև կնոջը, դատապարտելով յերեխաներին ամեն տեսակ պատահարներ: Չրկված մայրական խնամքից և առաջին հերթին կանոնավոր սննդից, յերեխաները տալիս են մահացողության հսկայական տոկոս կապիտալիստական բոլոր յերեխներում:

Այսպես համաձայն գերմանական սոցալիստիկայի Բեռլինում, 3737 մահացած ծծկեր յերեխաներից հաշվում է՝

մայրական կաթով սնվածներ	143 հոգի
խոռ " " " " " " " " " " " "	163 " "
արհեստական " " " " " " " " " " " "	3431 " "

Մահացողության վրա ազդում է այն հանգամանքը, թե ինչքան յերկար է տեվել կրծքով սնելը: Ինչքան ավելի յերկար է տևում առաջին տարվա ընթացքում մայրական կաթով սնվելը, այնքան ավելի զիմացելուն և ամուր է լինում մանկան որդանիդմը մահվան հանդեպ: Դյուսելդորֆի (Գերմանիա) 8000 ծծկեր յերեխաների մահացածների ուսումնասիրությունը ցույց է տալիս, վոր՝

Այն յերեխաները, վորոնք զուրկ են յեղել մոր կաթից տալիս են 38% մահաց.		
" " " " " " " " " " " " " " " "	6 շաբ. են սնվել " " " " " " " " " " " "	36%
" " " " " " " " " " " " " " " "	6-13 " " " " " " " " " " " "	24%
" " " " " " " " " " " " " " " "	13-26 " " " " " " " " " " " "	15%
" " " " " " " " " " " " " " " "	26-29 " " " " " " " " " " " "	7%
" " " " " " " " " " " " " " " "	30-45 " " " " " " " " " " " "	2%

Ըստ գերմանական գիտնական Ոստա Բյուլլեյի, վորը առանձնապես հայտնի յն պրոլետարական յերեխային նվիրված ուսումնասիրություններով, հաստատվում է, վոր կապիտալիստական յերեխներում ընտանիքի քայքայման հետևանքով անընդհատ պակասում է մայրական կաթով սնվողների տոկոսը, ինչպես յերեվում է հետևյալ աղյուսակից՝

Բեռլինում ամեն 100 յերեխաներից մոր կաթով սնվում էին	
1870 թ.	50,70%
1890 թ.	43,19%
1900 թ.	35,00%
1930 թ.	30,10%

Իմպերիալիստական պատերազմի ընթացքում անտեսական ճղնաթամի սոսկալի պայմաններում 1-5 տարեկան յերեխաների մահացողությունը ընդունեց ահեղի չափեր: Ընդունելով 1913 թ.

մահացողությունը հավասար 100, Բյուլլեն տալիս է հետևյալ պատկերը

Թիվը	1—2 տ.	2—3 տ.	3—4 տ.	4—5 տ.
1913	100,0	100,0	100,0	100,0
1914	96,8	100,5	99,3	104,0
1915	117,3	137,9	142,3	141,9
1916	116,0	128,2	128,9	131,7
1917	116,1	149,5	144,3	143,7
1918	177,4	212,5	211,3	203,8

Ի՞նչ են ասում թվերի այս լուռ սյունյալները, յեթե վոչ այն, վոք ժինչդեռ արյունահեղ ճակատամարտերում, խոնավ ու ցուրտ խրամատներում անթիվ հազարներով ընկնում էին հայրերը, թիկունքում այդ հայրերի փոքրիկ պրոլետաները, վոչ պակաս զոհեր էին տալիս մահվան, զրկված լինելով կյանքի ամենատարբերական պահանջներին բավարարելու հնարավորութունից:

Յերեսաների այս համատարած մահացության ու կստորածի ստաջն առնելու համար վաղուց է, վոր բոլոր բուրժուական յերկրներում հանդես են յեկել զանազան բարեգործական կադմակերպություններ՝ չքավոր զասակարգերի մայրերին և մանուկներին ոգնություն հասցնելու նպատակով, և չնայած, վոր այդ քրիստոնեական և պացիֆիստական բնույթ կրող ձեռնարկությունները վորոչ չափով զալիս են մեղմացնելու պետության և հասարակության սպառնացող մեծ վտանգը, վորին ապացույց կարող են ծառայել որինակ, Լիոնի (Ֆրանսիա) կանանց չըջանում կատարած աշխատանքի արդյունքները, — այն և ծիծ տվող մայրերի տոկոսի բարձրացումով տարեց տարի պակասում է յերեսաների մահացությունը:

Տարի	Կրճի վերակող մայրերի %	Մահացող յերեսաների %-ը
1906	60	11,0
1907	65	11,0
1908	87	6,0
1909	88	6,0
1910	90	5,2

Բայց միայն հոկտեմբերյան հեղափոխությունից հետո յե, վոր մայրության և մանկության պաշտպանության գործը զրկում է Իրեն բարձրության վրա, և ընդունելով որնազրական ամուր հիմ-

նավորում, դառնում է պրոլետարական պետության և հասարակության ամենալուրջ հոգատարության առարկա: Կարճ ժամանակամիջոցում, շնորհիվ կոնսուլտացիաների, բաղձաթիվ մսուրային ցանցի և մոր ու մանկան պաշտպանության այլ տիպի պատկանող հիմնարկների տարածման, յերեսաների մահացության %-ը, վորը ցարական ըեժիմի ամենախայտառակ ժառանգությունը պիտի համարել, պակասում է համարյա 50 %, ինչպես թվերն են վկայում:

Յերեսաների մահացության %

Տարի	Ընդհ.	Կենդանու.	Մահվա
1913	27,3	23,9	26,8
1914	22,3	2,8	21,5
1926	18,7	16,8	17,5
1930	14,1	12,1	13,4

Յերես համեմատության առնենք մսուրներից և կոնսուլտացիաներից ոգտվող յերեսաներին՝ չոգտվողների հետ կտեսնենք, վոր ժինչդեռ առաջինների մեջ մահացողությունը կազմում է 10,7 % յերկրորդների մեջ նա հավասար է 25,0 %:

Վերը բերած փաստերից մենք այն յեղբակացության պիտի գանք, վոր յերեսաների առողջ զարգացումը և նրանց մահացությունը համարյա ամբողջապես պայմանավորված է սոցիալ-տնտեսական գործոններով, և վոր գործոնների փոփոխումով այս կամ այն ուղղությամբ, համապատասխան փոփոխության է յենթարկվում և յերեսաների առողջական վիճակն ու նրանց մահացությունը:

2. ՅԵՐԵՍԱՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՅԵՎ ՍՈՑ. ՄԻՋԱՎԱՅՐԸ

Անհատի ֆիզիկական զարգացումը կատարվում է աստիճանաբար համաձայն ենդոգեն ֆակտորների. բայց ինչքան էլ գորեղ լինեն այդ վերջինները, այնուամենայնիվ նոքա խտորեն պայմանավորված են սոցիալական գործոններով: Յերես կանգ առնենք առանձնապես ֆիզիկական զարգացման այնպիսի հիմնական կողմերի վրա, ինչպես հասակը (բոյը) և քաշը, վորոնց վրա, ինչպես գիտենք, ուժեղ ազդեցություն ունեն ժառանգական ֆակտորները, կտեսնենք, վոր նույնիսկ դրանց զարգացումը մեծ չափով է կապված սոցիալական շրջապատի հետ: Դրա համար բավական է մի պատույտ կատարել կապիտալիստական մեծ քաղաքների կենտրոնական հարուստ և պրոլետարական աղքատ թաղամասերում, վորպեսզի ամեն մի կտրված վերանա, կենսուրախ և առողջ յերեսաների խմբեր մի տեղ, նիհար, վատառողջ և գունատ խմբեր մյուս

տեղ, ամեն բան պարզ են դարձնում նույնիսկ առանց մանրամասն ուսումնասիրութիւններ կատարելու: Բայց և այնպէս, ավելի հաստատելու համար կանգ առնենք մի շարք դիտական հետազոտութիւնների վրա:

Տարբեր ժողովուրդների դպրոցական յերեխաների հասակը յեկ քաղք

Տարեթիվ	Հասակը (սանտ)			Քաղք կիւլտը.		
	Գերման.	Ռուս.	Շվեդներ.	Գերմ.	Ռուս.	Շվեդներ.
8	121,5	118,9	—	24,9	24,0	—
9	126,2	122,7	—	26,8	25,3	—
10	130,7	130,0	131,0	29,4	27,6	29,3
11	135,0	134,0	133,1	32,1	29,1	30,3
12	139,2	138,0	136,0	34,9	30,9	32,2
13	143,8	142,5	141,0	38,2	32,7	34,5
14	149,7	144,0	141,0	42,6	35,2	37,6
15	156,7	155,7	149,0	51,0	39,3	42,3
16	163,5	161,4	156,0	57,1	44,0	46,8
17	167,6	166,0	162,0	62,7	49,7	52,8
18	168,9	168,0	167,0	66,0	53,9	57,6
19	169,8	169,4	170,0	—	66,0	61,3

Այս աղյուսակից յերեւում է, վոր տարբեր ազգերի պատկանող յերեխաները հասակի ու քաշի տեսակետից վորոշ չափով տարբերվում են միմեանցից, և դրա պատճառը պիտի վորոշենք վոր միայն հնդդերն, այլ և եզգոդներն, գլխավորապէս սոցիալ-տնտեսական պայմանների տարբերութեան մեջ: Դրան ապացույց կարող է ծագայել այն, վոր միևնույն ժողովրդի ֆիզիկական կառուցվածքը, նրա հասակն ու քաշը չեն մնում միևնույնը, այլ ժամանակի ընթացքում զգալի կերպով փոխվում են: Որինակ 1850—1900 թ. Հոլլանդացիների զինակոչների հասակը 158 սա. բարձրացել է 169,4 սա., իհարկէ, դա կատարվել է շնորհիվ Հոլլանդական ժողովրդի գլխավորապէս ունեւոր դասակարգերի ընդհանուր սոց.—տնտեսական կյանքի բարելավման հետեւանքով: Նույնը տեղի յի ունենում է այլ յերկրներում: Ըստ Մոսկովայի հայտնի անտրոպոլոգ (ժարգաբան) Բուճակի և զերմանական դիտանական Շլեյխերի դրա բացատրութիւնը կապված է գլխավորապէս սննդի սպիտակուցային մասի (մսեղենի) ավելի մեծ չափով դորձածելու հետ:

Բացի այս ընդհանուր բնույթ կրող հետազոտութիւններից, կատարված են մեզ համար ավելի արժեքավոր դիֆերենցիալ ու-

սումնասիրութիւններ սոցիալական առանձին խավերի պատկանող յերեխաների վրա, վորտեղից պարզ յերեւում է, թէ ինչպիսի խաչք տարբերութիւն կա տարբեր դասակարգերի յերեխաների ֆիզիկական զարգացման (հասակի և քաշի) մեջ:

Տարբեր դասակարգերի յերեխաների հասակը յեկ քաղք

Տարեթիվ	Հասակը (սանտ)		Քաղք (կիւլտ)	
	Բուրժ.	Գրուետ	Բուրժ.	Գրու.
9	130,6	128,0	27,3	26,1
10	135,2	131,4	29,79	27,59
11	139,0	135,9	32,80	29,13
12	145,0	140,4	35,22	30,93
13	148,9	146,0	39,52	32,72
14	157,0	153,3	44,52	35,19
15	162,3	159,3	50,89	39,35
16	168,8	163,7	56,14	40,04
17	169,1	166,5	58,68	49,75
18	169,7	167,9	59,48	53,86
19	170,8	168,7	62,48	56,0
20	171,3	168,9	64,40	57,01

18827-59 (1007 33437)

1926 թ. Բեռլինի յերկու տարբեր տիպի դպրոցներում—մասնատան (չունեւոր դասակարգերի համար) և լիցեյներում (ունեւորների համար) աղջիկների չափումներից Շլեյխերը հետեւյալ արդիւնքներն է ստացել:

Բեռլինի աղջիկների հասակը յեկ քաղք

Գարտի տիպը	Հասակը			Քաշը		
	8	10	13	8	10	13
Մասնատան դպրոց	114	128	144	20,3	26,5	36,7
Լիցեյներ	127	138	153	26,2	32,0	42,8

Ի՞նչ ուրիշ յեղրակացութիւն կարելի յի հանել այս անաչառ և պերճախոս թվերից, քան թէ այն, վոր չնայած արեղակը բոլորին է լույս տալիս, բայց այդ լույսի ճառագայթները և ջերմութիւնը ներկա դասակարգային հասարակութեան մեջ համասար չափով չեն բաշխվում բոլորի համար. և միանգամայն իրավացի յի բժիշկ Գեյշլինան, յերբ նա պնդում է, վոր չքավոր դասակարգի յերեխաների ֆիզիկական և ինչպէս կտեսնենք, մասվոր հետամու-



ցությունը արդյունք են վուչ այնքան ժառանգականության, վորքան աննորմալ սոցիալ-տնտեսական և կուլտուրական պայմաններին:

Այսպես և ընթանում յերեխաների ֆիզիկական դարգացումը կապիտալիստական հասարակարգի առույցյուսում, նրա «խաղաղ» և «նորմալ» պայմաններում: Բայց յերբ այդ հասարակարգը, շնորհիվ իր ներքին հակասական ուժերի պարբերաբար ապրում է սուր տաքնապներ ու ճգնաժամեր, այն ժամանակ ամբողջ ազգաբնակչության և առաջին հերթին աճող սերնդի համար սկսում են կիսաքաղց դոյության, այլասերման և մահացության սև ու մութ ծանր օրեր: Դրա համար բավական է հիշել միայն վերջին իմերիալիստական պատերազմի ավերվածությունները Գերմանիայում և Ֆրանսիայում:

250 հազար դպրոցական յերեխաներից Բերլինում 1918-20 թ. Քարչիի հետազոտությունների համաձայն՝

100	հազ. ք հոգի թույլ ցած սնունդ ունեյին
80	» » վատ » »
100	» » հյուժված սնուդի պ կասից

Լեյպցիգի, Մյունխենի և այլ քաղաքների հետազոտությունները նույն բանն են վկայում: Համեմատած 1914 թ. հետ դպրոցական յերեխաների հասակը պատերազմի տարիներում պակասել և մեկ ամտ., իսկ քաղք 4 կիրգրամմով, Չայցուրգում նույնիսկ 8 կիրգրամմով: Մեզ մոտ Խորհրդ. Միության սահմաններում կատարած ուսումնասիրություններից առանձին ուշադրության են արժանի պրոֆ. Շտեֆկոյի և բժիշկ Նիկոլայեվի հետազոտությունները Ուկրաինայում և Ղրիմում: Նոքա ցույց են տալիս այն քաղքայիչ ազդեցությունը վոր թողել են աճող որդանիդմի վրա պատերազմի և քաղաքացիական կռիվների սովն ու համաճարակները: Տարիներ տեղո անբավարար սնուդի և քաղցի հետևանքով համարյա կանգ եր առել յերեխաների ֆիզիկական դարգացումը: Հասակի և քաչի աճումը պակասել եր 45-70 %, կրծվանդակի շրջազիծը 6-9 ստ., ներքին որդաններից՝ - սիրտը կորցրել եր իր քաչի 30-40 %, լյարդը և մկանները 55-75 %, իսկ վոր ամենակարեվորն է այս ուսումնասիրությունների մեջ, - դա ներքին սեկրեցիայի գեղձերի քանակական և վորակական փոփոխություններն են, վորոնց վրա առաջին անգամ ուշադրություն դարձրին այս յերկու գիտնականները: Աննորմալ պայմանների ազդեցության տակ՝ - վահանագեղձը կորցնում է իր քաչի մինչև 75 %, տիմուսը 60-80 %, նույնը տեղի յե ունենում և հիպոֆիզի, եպիֆիզի վերաբերյալ: Ուժեղ այլասերման և բեզբեասիվ դարգացման է յենթարկվում նաև սեռական

բալարտաը, վորը դադարում է հասուն սեռական բջիջներ արատաքել, դաշտանը և սերմահոսությունը կանգ են առնում:

Շտեֆկոյի և Նիկոլայեվի ուսումնասիրությունները գիտության մեջ այն նշանակութունն ունեն, վոր նոքա պարգեցին այն ուղիները, վորոնց միջոցով արտաքին աշխարհը կապվում է որդանիդմի ներքին աշխարհի հետ: Այժմ ընդունվում է, վոր սոցիալ-տնտեսական աննպաստ պայմաններն առաջին հերթին ներգործում և փոխում են որդանիդմի մեջ դրված ամենազգայուն մեխանիզմները-ենդոկրին դեղձերը, վորոնք, իրենց հերթին, հորմոնալ-քիմիական ճանապարհով, առաջ են բերում որդանների և սիստեմների անատոմ-ֆիզիոլոգիական բաղմապիսի փոփոխումներ:

3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅԻՐ ՅԵՎ ՎԱՐՔԸ

Յեթե սոցիալ-տնտեսական ֆակտորները ի վիճակի յեն փոխելու որդանիդմի բիոլոգիական կոնսերվատիվ և ամրակուռ մեխանիզմները, ապա պարզ է թե ինչպիսի հեշտությամբ նոքա պիտի ներգործեն դարգացող անհատի անկազմակերպ և դյուրաշարժվարքի ու ամբողջ պիսիկայի վրա: Յեվ իսկապես, թե առույս կյանքը, թե գիտական հետազոտությունները, գալիս են ապացուցելու, վոր յերեխաների գիտելիքների պաշարը, նրանց հետաքրքրությունները, բնավորության գծերը և ամբողջ աշխարհայացքը, արդյունք է սոցիալական այն շրջապատի՝ - ընտանիքի, փողոցի, ընկերական շրջանի, դպրոցի, քաղաքական կազմակերպությունների և այլն, վորոնց անմիջական ազդեցության տակ է անցնում յերեխաների կյանքը:

«Ասա, ո՞վ է ջո ընկերը, ասեմ՝ ով ես դու» առածի պարզ և ամփոփ ձևով ժողովուրդը տալիս է այստեղ իր դարավոր գիտողությունները միջավայրի հսկայական նշանակության մասին անհատի ձեվավորման դործում:

Արդեն բուրժուական շատ գիտնականներ, սկսած Բուսսոյից, գտնում եյին, վոր սոցիալական միջավայրի հանդամանքները գորեղ խթան են հանդիսանում կրթա-դաստիարակչական աշխատանքի համար. այսպես՝ անդլիական նշանավոր հոգեբան Սյոլլիի պնդում է, վոր բիոլոգիական ֆակտորները բացատրում են մանկան վարմունքի միայն մի չնչին մասը, մնացած մեծագույն մասը-մտավոր ու բարոյական դարգացումը բավարար կերպով կարելի յե հասկանալ միայն սոցիալական պայմանների հաշվառումով: Ֆրանսիական գիտնական Ուլեմը, ուսումնասիրելով ավելի

քան վեց հազար նշանավոր Ֆրանսիական դրոշմերի, գիտնականների և հասարակական ու քաղաքական գործիչների կյանքը, նույնպես այն յեղրակացութեան և զալիս, վոր յեթն վոչ ասղանդի ծագումը, դոնն նրա լրիվ դարգացումը պայմանավորմամբ և սցիալական գործոններով:

Բայց, չնայած բուրժուական գիտութեան առանձին ներկայացուցիչների ճիշտ տեսակետներին, բուրժուական մանկաբանութեան և մանկավարժութեան ընդհանուր մոտեցումը և նպատակագրումը միջավայրի ուսումնասիրութեան պրոբլեմի նկատմամբ, միանգամայն հակադիր է խորհրդային մանկաբանութեան:

Մինչդեռ խորհրդային պեդոլոգիան բացառիկ ուշադրութեամբ է նվիրում և կատեգորիկ կերպով առաջադրում սոցիալ-դասակարգային չընկալաբանութեան լինելը, գտնելով, վոր միայն այդ յեղանակով հնարավոր կլինի ճանաչել յերեխային և կրթել նրան կոմունիստական, մարքս-լենինյան մանկավարժութեան վոգով, բուրժուական պեդոլոգիան ընդհակառակը ձեռնարկում է սոց. կյանքի ուսումնասիրութեանը, նպատակ ունենալով ճանաչել նրան և աշխատել վորքան կարելի յե հետո պահել յերեխային միջավայրի և առօրյա կյանքի վտանգավոր սոցիալ-քաղաքական աղղեցութեանից, կրթելով նրա մեջ սեր և հարգանք դեպի իր հայրենիքը և բուրժուական հասարակարգը:

Դեռ նախապատերազմյան հետադոտութեաններից հայտնի յեք, վոր յերեխաների մտավոր դարգացումը և նրանց դպրոցական հառաջադիմութեան ամենասերտ կերպով և կապված նրանց նորմալ ֆիզիկական դարգացման, հետևապես և սոցիալական միջավայրի հետ: Սյուպես, Մոսկվայում կատարված ուսումնասիրութեաններից յերևում է, վոր ավելի հառաջադեմ դպրոցականներն ունեն և ավելի լայն կրճգմանդակ և ուժեղ թոքեր, քան թե անհառաջադեմ աշակերտները:—

Տարիք	Հառաջադեմ. կրճգմանդ.	Անհառաջադեմ. կրճգմանդ.
10—11	65,8 սա.	62,8
12—13	67,4	66,7
14—15	73,9	73,5
15—16	77,8	76,6

Դերմանիայում կատարած 5.992 տղաների և 4.754 աղջիկների հետադոտութեաններից պարզվում է, վոր նորմալ խմբերում յերեխաներն ավելի բարձրահասակ են, քան թե հետամնաց խմբերում:—

Ուսման ցարից

Տղաներ	(Հասակը սանտիմետրով)						
	2	3	4	5	6	7	8
Նորմալ խումբ	123,4	128,0	132,6	135,9	139,8	145,6	150,6
Հետամն.	120,8	126,5	130,6	135,0	138,9	141,7	149,1

Ուսման ցարից

Աղջիկներ							
	2	3	4	5	6	7	8
Նորմալ խումբ	121,8	127,1	131,8	136,0	142,5	148,4	153,7
Հետամն.—	117,0	121,4	126,4	131,2	139,3	145,1	146,6

Ամերիկայում հարյուր հազարավոր դպրոցական յերեխաների ուսումնասիրութեանները նույնպես հաստատում են, վոր հառաջադեմ աշակերտներն ավելի ծանր կշիռ ունեն հետամնացների համեմատութեամբ:

Գալը կերպարամներով.

Տարիք	Տղաներ		Աղջիկներ	
	հառաջ.	հետամն.	հառաջ.	հետամն.
9	26,38	25,25	26,31	24,44
10	28,82	27,42	27,00	26,74
11	31,30	29,83	30,02	29,17
12	33,86	32,51	33,56	32,27
13	36,45	34,81	36,89	36,17
14	39,63	38,56	43,47	41,40
15	45,06	42,65	47,04	45,28
16	51,37	47,25	56,98	48,77

Սոցիալ-տնտեսական գործոններին, ինչպես գիտենք, առանձին ուշադրութեան են նվիրում խորհրդային մանկաբանները կատարելով բազմաթիվ հետադոտութեաններ, դրանցից հետաքրքիր է բերել այստեղ Մոսկվայի հայտնի պեդոլոգ Արյամովի ուսումնասիրութեանների արդյունքները, վորը նա ստացել է Մոսկվայի տարբեր խավերի պատկանող 1500 դպրոցականների հետադոտումներից: Արյամովը վերցնում է յերեք բայտներ՝ 1) զուտ բանվորական (մոտ 95%) աղգարնակութեան ունեցող—Միտիչ-չինսկի բայտն: 2) Ոստիկանական աղգարնակութեան ունեցող Սիմոնովսկի բայտն— 67% բանվորներ, 25% ծառայողներ և մնացածն այլ պրոֆեսիաների պատկանող և 3) Սմոլենսկի բայտն— իր 19% բանվորներով, 53% ծառայող, 6% վաճառական և մնացածն այլ պրոֆեսիաների պատկանող աղգարնակութեամբ:

Գործադրելով անկատային մեթոդը, հեղինակը բազմաթիվ

փաստական տվյալների հիման վրա պարզում և ի միջի այլոց յերեխաների իրեալները, հետաքրքրությունները, ով ի՞նչ պրոֆեսիայի ձգտելը և այլն:

Դուրս և գալիս, վոր բանվորական Միտիչչինսկի բայոնի յերեխաների ճնշող մեծամասնությունը հետաքրքրվում և սոցիալ-քաղաքական բովանդակություն ունեցող գրքերով և ծրագրում և իր ասյազա կյանքը բանվորական ասպարիզում գործելու համար, մինչդեռ մյուս—խառը ազդարնակություն ունեցող բայոնների դպրոցականները, մեծ մասամբ արտաշայտում են այլ ասպարեղներում աշխատելու ձգտումներ: Այստեղ նորից տեսնում ենք, թե ինչպես սոցիալական շրջապատի ազդեցության տակ կադմակերպվում և մարդկանց, ներկա դեպքում, յերեխաների սոցիալ-քաղաքական դեմքը, նրանց վարքի ու պոիիիկայի մնայուն սկզբունքներն ու ձևերը:

Այս բոլորից հատկանշի յե ախ վերին աստիճանի ուշադիր վերաբերմունքը, վոր ունի մարքս-լենինյան մանկաբանությունը դեպի սոցիալական ֆակտորները ուսումնասիրության գործը: Ճանաչելով ու տիրապետելով միջավայրի գործոններին, ուսուցչչը հնարավորություն և ստանում ընտրություն կատարել իր հայեցողությամբ դասավորել միջավայրի պայմանները, փոխարինել նրանց ուրիշներով և, ասեղծելով մի նոր արհեստական միջավայր, նպաստել մարդու և յերեխայի նորմալ ֆիզիկական և հոգեկան զարգացման բարդ պրոցեսին:

Ամփոփելով այս առաջադրության մեջ շոշափած խնդիրները, գալիս ենք հետևյալ յեղրակացության՝

1. Վոր միջավայրը, հատկապես սոցիալականը, ներգործելով որդանիզմի վրա, կարող և առաջ բերել նրա մեջ անատոմիական և ֆիզիոլոգիական յերկարատև և կայուն փոփոխություններ:
2. Վոր միջավայրի ազդեցությանն առաջի հերթին յենթակա յեն ներքին սեկրեցիայի գեղձերը, վորոնք փոփոխվելով իրենց հերթին, առաջ են բերում որդանիզմի կառուցվածքի և վարքի խորը փոփոխումներ:
3. Վոր այդ փոփոխությունները տեղի յեն ունենում նաև սեռական գեղձերի մեջ և այդպիսով փոխանցվում հետևյալ սերնդին՝ դասնայով ժառանգական:
4. Վոր խորհրդային մանկաբանությունը, հենված սոցիալական գործոնի գորեղ ազդեցությանը, և վոր մի անգամ

չթերազնահատելով ենդոգեն ֆակտորների դերը, մեծ հուսով և ուղտիմիզմով (լավատեսությամբ) և նայում դեպի մանուկ սերնդի և առհասարակ մարդու որդանիզմի դաստիարակություն և աչնր-վացման խնդիրներին:

IV. ԻՆՔՆԱՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՐՑԵՐ.

1. Ի՞նչումն և կայանում միջավայրի դերը յերեխայի զարգացման գործում:
2. Վորո՞նք են ֆիզիկական և սոցիալական միջավայրի գործոնները:
3. Նկարագրել ֆիզիկական գործոնների ազդեցությունը յերեխաների վրա:
4. Ի՞նչ սոցիալական գործոններ են ազդում յերեխաների ֆիզիկական և հոգեկան զարգացման վրա:
5. Ի՞նչ մոտեցում ունի դեպի սոցիալական ֆակտորը բուրժուական և խորհրդային պեդոլոգիան:
6. Ինչո՞ւմն և կայանում միջավայրի և ժառանգականության դերը յերեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման գործում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

1. Арямов—Основы педологии—главу о среде.
2. Басов—Основы общей педологии—гл. о среде.
3. Рюлле—Пролетарское дитя
4. Николаев—О влиянии социальных факторов на развитие детей
5. Штефко—О влиянии голода на детей.



24

1890

արամ

377

1191

2013

0025377

« Ազգային գրադարան »



NL0025377

